

# Յայտարարութիւն ներգաղթի արձանագրութեանց մասին

Ֆր. Ազգ. Միութեան դիւանիկն ստացած ենք  
հետևեալ յայտարարութիւնը, իրատարակութեան  
խնդրանքով.—

Խ. Հայաստանի կառավարութեան կատարած  
խնդրանքին վրայ, Գերագոյն Սովետի Խորհուր-  
դը, իր ՀԿ Նոյեմբեր 1945ի ոբոշումով, արտօնու-  
թիւն ընծայած է ձեռնարկելու ներդաշնչի կազ-  
մակերպութեան, միջոց տալով Սփիւռքի հայու-  
թեան հաստատուելու Մայր Հայրենիքի հողին  
վրայ :

Նոյն թուականին, Գերագոյն Սովետի Խոր-  
հուրդը ինչպէս արդէն հաղորդուած է ժողովուր-  
դին, ներդաշնչողներու դիւրութեան համար,  
թոյլտութիւն կ'ընծայէ փոխադրելու անձնական  
ամէն տեսակ առարկաներ եւ կը խոստանայ տու-  
ներ կառուցանելու համար նախատեսուած ծախքե-  
րուն մասնակցիլ 50 առ 100 համեմատութեամբ:

Ֆրանսայի Սովետական Դեսպանատունը, Գե-  
րագոյն Սովետի ոբոշումը դործնականի վերածե-  
լով, հրաւիրած է ֆրանսահայ Արդ. Բնդ. Միու-  
թիւնը, որպէս դաղութի պաշտօնական ներկայա-  
ցուցիչ մարմին, խնդրելով որ իր օժանդակութիւ-  
նը բերէ ներդաշնչի կազմակերպութեան աշխա-  
տանքներուն, դիւրացնելու համար ձեռնարկին  
դործադրութիւնը:

Արդ, բոլոր այն Հայերը որ կը ցանկան երթալ  
ու հաստատուիլ Խորհրդ. Հայաստան, Ֆ. Ա. Լ.  
Միութեան միջոցաւ պէտք է խնդրագիր մը ներ-  
կայացնեն, ուղղուած Խ. Հայաստանի կառավա-  
րութեան, որոնց լրիւ ցանկը ոլատրաստուելէ  
վերջ պիտի յանձնուի Սովետ. Դեսպանութեան եւ  
այս վերջինը պիտի զոհացնէ ներդաշնչել փափա-  
քող Հայերու ցանկութիւնը: Ստանալու համար  
խնդրագրին օրինակները, դիմել Ֆ. Ա. Լ. Միու-  
թեան կեդրոնական դիւանին, Շրջանային վարչու-  
թիւններուն եւ բոլոր մասնաճիւղերուն:— (Կնիք)